ՀԵՆԱՐԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Վ.Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ինչպես պատրաստվել հանդիպմանը և ինչ հարցեր տալ բժշկին

Օգտակար հարցեր՝ ուռուցքաբանական թիմի հետ հանդիպումից առաջ, դրա ընթացքում և հետո

Հարգելի բարեկամ,

Տվյալ գրքույկը մշակվել է «ՀԵՆԱՐԱՆ» բարեգործական հիմնադրամի կողմից, որը զբաղվում է Հայաստանում քաղցկեղով պացիենտների շահերի պաշտպանությամբ:

Քաղցկեղ ախտորոշման կամ նույնիսկ դրա կասկածի հետ առերեսվելը մեծ դժվարություն է ցանկացած մարդու համար: Տվյալ գրքույկով ուզում ենք օգնել Ձեզ՝ հուշելով, թե ինչպես նախապատրաստվել ուռուցքաբանական թիմի հետ հանդիպմանը և ինչ հարցեր տալ բժիշկներին:

2019թ. հուլիսից ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով Հայաստանը որդեգրել է քաղցկեղի բուժման ասպարեզում լավագույն միջազգային փորձը, երբ քաղցկեղով պացիենտին բուժում է ոչ թե մեկ բժիշկ-մասնագետ, այլ մի ամբողջ ուռուցքաբանական թիմ (tumor board):

Ուռուցքաբանական թիմն առողջապահական ոլորտի տարբեր մասնագետներից կազմված խումբ է, որոնք միասին քննարկում են հիվանդների առանձին դեպքերը՝ որոշելու բուժման լավագույն տարբերակները և պլանավորելու դրանց իրականացումը: Ուռուցքաբանական թիմը բաղկացած է ուռուցքաբանության մեջ մասնագիտացած բժիշկներից՝ վիրաբույժից, քիմիաթերապևտից, ճառագայթային ուռուցքաբանից, ճառագայթային թերապևտից, հյուսվածաբանից, ինչպես նաև կարող են ընգրկվել այլ մասնագետներ, օրինակ՝ արյունաբան, գինեկոլոգ, հոգեբան, գենետիկ, բուժքույր և այլն:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

- Պատրաստվեք, որպեսզի կարողանաք հստակ նկարագրել Ձեր գանգատներն ու ընդհանուր վիճակը: Օրինակ՝ ինչպե՞ս եք Ձեզ զգում, ցավեր ունե՞ք, ո՞ր հատվածում եք ցավ զգում, ե՞րբ են սկսվել հիվանդության առաջին նշանները:
- Ձեր հարցերը նախապես մտածեք և գրի առեք:
- Հիշեք, որ բժշկին տեղեկացնեք՝ որքան մանրամասն եք ցանկանում տեղեկանալ Ձեր ախտորոշման և բուժման առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ով է Ձեր նախընտրելի ներկայացուցիչը՝ բուժող թիմի հետ շփվելու համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

- Խնդրեք ընտանիքի անդամներից որևէ մեկին կամ ընկերոջն ուղեկցել Ձեզ, քանի որ երկուսով ավելի շատ տեղեկություններ կմտապահեք և ավելի լավ կընկալեք:
- Խոսեք Ձեր ախտանշանների և ցավի մասին. պետք չէ ենթադրել, թե այն, ինչ զգում եք, «նորմալ» է:
- Բժշկի ասածը կրկնեք Ձեր բառերով («ճի՞շտ եմ Ձեզ հասկանում, որ…»): Սա լավագույն ձևն է վստահ լինելու, որ ասվածը ճիշտ եք ընկալել:
- Բաց և շիտակ խոսեք Ձեր մտահոգությունների մասին: Ձեր և մտերիմների զգացողությունները շատ կարևոր են:
- Նախքան որևէ կարևոր որոշում կայացնելը՝ մտածելու համար լրացուցիչ ժամանակ խնդրեք:
- Տեղեկացեք Հայաստանում գործող պացիենտական կազմակերպությունների մասին, որոնք ինչ-որ կերպ կարող են աջակցել կամ հուշել, թե որտեղ և ինչպես կարող եք գտնել հիվանդության և բուժման մասին մանրամասն տեղեկություններ:
- Տեղեկացրեք բժշկին որևէ սոցիալական խմբին պատկանելու մասին (ունեք ապահովագրություն կամ սոցփաթեթ, «Փարոս»):

ԵՂԵՔ ՀԱՄԱՐՁԱԿ ՀԱՐՑԵՐ ՏԱԼՈՒՑ

Եթե որևէ բան չեք հասկանում, օրինակ՝ բժշկական տերմիններ, ապա խնդրեք, որ պարզաբանեն:

- Ի՞նչ ընտրության հնարավորություն ունեմ: Որո՞նք են ինձ հարմար տարբերակները: Որո՞նք են այդ տարբերակների առավելություններն ու թերությունները և ինչպե՞ս դրանք կանդրադառնան ինձ վրա: Ի՞նչ ակնկալիքներ կան բուժումից:
- Արդյոք կա՞ վիրահատության տարբերակ:
- Որո՞նք են բուժման հետագա քայլերը:
- Որո՞նք են բուժմանն առնչվող ռիսկերը:
- Ի՞նչ տեղի կունենա, եթե հրաժարվեմ բուժման այս տարբերակից:
- Արդյո՞ք իմ դեպքը քննարկվել է բժիշկների թիմի կողմից: Ես կունենա՞մ իմ ուռուցքաբանական թիմը: Ես մասնակցելու՞ եմ այդ թիմի քննարկումներին: Եթե ոչ, ապա ե՞րբ և ինչպե՞ս եմ տեղեկանալու այդ թիմի կայացրած որոշումներին:
- Որքա՞ն հաճախ եք այս տեսակի քաղցկեղ բուժում:
- Որո՞նք են ապագայի հետ կապված մտահոգությունները (օրինակ՝ առողջություն, սեռական կյանք, աշխատանք, սպորտային կյանք, կանացիություն, կյանքի որակ և այլն):
- Կարո՞ղ եք տանը կարդալու համար ավելի մանրամասն տեղեկություններ / հղումներ / գրքույկներ տրամադրել:
- Կարո՞ղ եմ լաբորատոր / գործիքային հետազոտությունների արդյունքների պատճեններն ունենալ՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով:

ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ ՀԵՏՈ

- Ստացած տեղեկությունների մասին խոսեք Ձեր ընտանիքի անդամների՝ կնոջ/ամուսնու, ծնողների, հասուն երեխաների, քրոջ/եղբոր կամ ընկերների հետ: Փոխանցեք նրանց Ձեզ հասանելի լրացուցիչ տեղեկությունները, քանզի նրանք նույնպես հարցեր կունենան:
- Եթե երկրորդ բժշկական կարծիքի անհրաժեշտություն եք զգում, ապա անպայման ստացեք այն: Ապահովագրական փաթեթ ունենալու դեպքում անպայման ճշտեք, թե որ ծախսերն են փոխհատուցվում:

ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ

- Վստահեք Ձեր ինտուիցիային: Երբեք մի՛ կայացրեք այնպիսի որոշում, որին ամբողջապես չեք վստահում:
- Միայն Դուք կարող եք որոշում կայացնել Ձեր կյանքին առնչվող հարցերի վերաբերյալ, ուստի միայն Դուք կարող եք որոշում կայացնել Ձեր բուժման վերաբերյալ: Մասնագետը Ձեզ համար և/կամ Ձեր փոխարեն որոշում կկայացնի միայն եթե Դուք նրան խնդրեք դրա մասին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ սպասելիքներ կան ինձ մոտ ախտորոշված քաղցկեղի բուժումից: Արդյո՞ք այն ժառանգական է:
- Արդյո՞ք կվերականգնվեմ այս բուժումից հետո: Ինչպե՞ս է գնահատվում բուժման արդյունքը:
- Ի՞նչ տեղի կունենա, եթե/երբ քաղցկեղը կրկնվի: Բուժման ի՞նչ տարբերակներ կան կրկնվող քաղցկեղի դեպքում:
- Ինչպիսի՞ն կլինի իմ կյանքի որակը՝ կարճաժամկետ և երկարաժամկետ առումով: Բուժման ընթացքում կկարողանա՞մ աշխատել, մարզվել, ճամփորդել կամ բարեկամներիս այցելել:
- Ի՞նչ է հորմոնալ բուժումը:
- Ո՞րն է հետագա հսկողության պլանը:
- Արդյո՞ք ինձ բուժելու է ուռուցքաբանական թիմը: Ո՞վ է լինելու իմ վերահսկող մասնագետը:
- Արդյո՞ք առանց բիոպսիայի հնարավոր չէ լիարժեք ճիշտ ախտորոշում կատարել և ճիշտ բուժում նշանակել:
- Պե՞տք է դիմել սննդաբանի՝ հատուկ սննդակարգի համար:
- Ու՞մ կարող եմ հարցեր հղել ժառանգականության վերաբերյալ:
- Կա՞ սոցիալական և հոգեբանական աջակցություն՝ լրացուցիչ օգնություն ստանալու այն հարցերի վերաբերյալ, որոնց առնչվում եմ (կամ կառնչվեմ):
- Երեխաներիս ինչպե՞ս ասեմ իմ հիվանդության մասին:
- Կարո՞ղ եմ սեռական հարաբերություն ունենալ: Եթե այո, ապա ե՞րբ և որքանո՞վ այն կտարբերվի նախկինից:
- Ի՞նչ կարող եմ անել՝ բուժումից հետո ֆիզիկական վիճակս վերականգնելու համար:

ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲՈՒԺՈՒՄ

- Արդյո՞ք վիրահատությունը միակ տարբերակն է:
- Որքա՞ն հաճախ է այս հիվանդանոցում կատարվում նման վիրահատություն:
- Ո՞վ է լինելու վիրահատող վիրաբույժը:
- Որքա՞ն հաճախ եք նախկինում կատարել նման վիրահատություն:
- Կարո՞ղ եք ցույց տալ նման վիրահատության արդյունքի լուսանկար:
- Ինչպիսի՞ ռիսկեր և առավելություններ կան:
- Ինչպիսի՞ բարդություններ կարող են առաջանալ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ առումով:
- Օրգանի հեռացման վիրահատությունից հետո հնարավո՞ր է կատարել վերականգնողական վիրահատություն: Ե՞րբ: Արդյո՞ք հնարավոր է իրականացնել այն միանգամից՝ առանց հետաձգելու:
- Որքա՞ն ժամանակ կմնամ հիվանդանոցում:
- Ինչպե՞ս նախապատրաստվեմ վիրահատությանը:
- Արդյո՞ք տանը լրացուցիչ օգնության կարիք կունենամ: Որքա՞ն ժամանակ կպահանջվի վերականգնվելու համար:
- Արդյո՞ք դա կազդի իմ պտղաբերության/հորմոնալ վիճակի/սեռական կյանքի վրա:

ՔԻՄԻԱԹԵՐԱՊԻԱ

- Ինչպե՞ս կարող եմ նախապատրաստվել քիմիաթերապիային:
- Ինչու՞ է ինձ անհրաժեշտ քիմիաթերապիա: Ինչու՞ վիրահատությունից առաջ/հետո:
- Որո՞նք են կողմնակի ազդեցությունները կարճաժամկետ և երկարաժամկետ առումով: Արդյո՞ք ինձ վատ կզգամ դրանցից:
- Արդյո՞ք կկարողանամ ամբողջովին վերականգնվել քիմիաթերապիայից:
- Արդյո՞ք այն կազդի իմ պտղաբերության/հորմոնալ վիճակի/սեռական կյանքի վրա:
- Արդյո՞ք կունենամ մազաթափություն: Հնարավո՞ր է դա կանխել:
- Ի՞նչ սահմանափակումներ կունենամ քիմիաթերապիայի ժամանակ և ինչի՞ց պետք է զգուշանամ:
- Կկարողանա՞մ հոգ տանել իմ երեխաներին, կատարել իմ տնային գործերը:
- Կարո՞ղ եմ շարունակել աշխատել:
- Արդյո՞ք ինձ մոտ ախտորոշված գոյացության գենետիկ բնույթին համապատասխանող հատուկ քիմիաթերապևտիկ դեղ եք ընտրում:
- Արդյո՞ք կան քիմիաթերապիայի տարբեր տեսակներ: Որո՞նք են առավելություններն ու թերությունները:
- Կա՞ այլ դեղորայքային բուժում:
- Արդյո՞ք բոլորը, ում մոտ ախտորոշվել է նույն տիպի քաղցկեղ, ունեն քիմիաթերապիայի կարիք:

- Ես պետք է անցնեմ քիմիաթերապիայի բոլո՞ր սեանսները, նույնիսկ եթե այն տկարացնի ինձ:
- Իսկ եթե օրգանիզմս չդիմանա՞ քիմիաթերապիայի այս տեսակին:
- Կարո՞ղ եմ բուժումից առաջ և դրա ընթացքում վիտամիններ կամ այլ սնուցող հավելումներ ընդունել:

ՆՇՈՒՄՆԵՐ

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱ

- Ինչու՞ է ինձ անհրաժեշտ ճառագայթային թերապիան: Ինչու՞ վիրահատությունից առաջ/հետո:
- Որո՞նք են կողմնակի ազդեցությունները: Դրանք կարճաժամկետ, թե՞ երկարաժամկետ բնույթ ունեն:
- Արդյո՞ք դա կազդի իմ պտղաբերության/հորմոնալ վիճակի/սեռական կյանքի վրա:
- Ինչպե՞ս կարող եմ նախապատրաստվել ճառագայթային թերապիային:
- Արդյո՞ք լիարժեք կվերականգնվեմ:
- Ճառագայթային թերապիան ցավո՞տ է:
- Ի՞նչ է բրախիթերապիան և ինչպե՞ս նախապատրաստվել դրան:
- Ո՞րն է տարբերությունը սովորական ճառագայթային թերապիայի և բրախիթերապիայի միջև:
- Ինչպե՞ս և ե՞րբ կպարզվի, արդյոք թերապիան հաջող է ընթացել, թե ոչ:
- Արդյո՞ք բոլորը, ում մոտ ախտորոշվել է նույն տիպի քաղցկեղ, ունեն ճառագայթային թերապիայի կարիք:
- Կկարողանա՞մ հոգ տանել իմ երեխաներին, կատարել իմ տնային գործերը:
- Կարո՞ղ եմ շարունակել աշխատել:

ԴԻԵՏԱ ԵՎ ՍՆՈՒՑՈՒՄ

- Որքա՞ն կարևոր է սննդաբանի խորհրդատվությունը:
- Ի՞նչ պետք է ուտեմ ճառագայթային բուժումից կամ քիմիաթերապիայից առաջ կամ դրա ընթացքում: Լրացուցիչ սպիտակուցների կարիք ունե՞մ:
- Ի՞նչ պետք է ուտեմ բուժումից հետո՝ ուժերս հավաքելու համար:
- Ի՞նչ պետք է ուտեմ ռեմիսիայի ընթացքում՝ առողջությունս պահպանելու համար:
- Շաքարը, ալկոհոլը, (մշակում անցած) միսը վնասակա՞ր են քաղցկեղով պացիենտի համար:
- Արդյո՞ք պետք է օրգանական սնունդ ընդունեմ:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ/ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

- Կա՞ պացիենտական կազմակերպություն, որի հետ կարելի է կապ հաստատել:
- Կարո՞ղ եմ ինչ-որ կերպ հանդիպել/շփվել ինձ պես պացիենտների հետ:
- Կարո՞ղ եմ հոգեբանի խորհրդատվության ուղեգիր ստանալ:
- Արդյո՞ք հոգեբանի խորհրդատվությունը փոխհատուցվող ծառայություն է:

ՀՀ ԱՆ Վ.Ա.Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոն (ՈւԱԿ) ՓԲԸ-ն քաղցկեղի ախտորոշման և բուժման առաջատար բազմապրոֆիլային մասնագիտացած և միակ համապարփակ կենտրոնն է Հայաստանում, որտեղ ապահովվում են մեր երկրում հասանելի քաղցկեղի բուժման պրակտիկորեն բոլոր եղանակները:

Այստեղ ապահովվում է ամբողջ շղթան. ուռուցքների առաջնային ախտորոշումից մինչև համալիր բուժում, պացիենտների դիսպանսեր հսկողություն և պալիատիվ խնամք: Իր պատմության ընթացքում ՈւԱԿ-ն անընդհատ ներդրել է քաղցկեղի բուժման և ախտորոշման նոր մոտեցումներ և տեխնոլոգիաներ: Այն շարունակաբար արդիականացվում է՝ ժամանակի պահանջներին լիովին համապատասխանելու համար, ընդ որում որոշ մոտեցումներ եզակի են Հայաստանում:

ՈւԱԿ-ը տարեկան ընդունում է 12000-ից ավելի պացիենտ (քաղցկեղի առաջնակի ախտորոշմամբ, ռեցեդիվով, ընթացիկ բուժում): Տարեկան իրականացվում է ավելի քան 4000 վիրահատություն, 6000 պացիենտի քիմիաթերապիա և գրեթե 2000 պացիենտի ճառագայթային թերապիա: Ամբուլատոր դիսպանսերային ծառայության հսկողության ներքո ներկայում գրանցված է շուրջ 30000 պացիենտ:

ՈւԱԿ-ում գործում է Հայաստանում միակ ռադիոգինեկոլոգիական բաժանմունքը, որտեղ բացառիկ BEBIG Saginova 3D սարքով իրականացվում է բրախիթերապիա:

2019թ. փետրվարին ՈւԱԿ-ում գործարկվել է Հայաստանում առաջին յոդաթերապիայի ծառայությունը, ինչպես նաև Հայաստանում միակ կիրառվող ռադիոիզոտոպային գամմա-դետեկտորը, որի շնորհիվ կրծքագեղձի վիրահատությունը հնարավոր է նվազ ագրեսիվ կերպով իրականացնել և կնոջը փրկել հաշմանդամացումից:

ՈւԱԿ-ը հանդիսանում է կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգի պիլոտային ծրագրի իրականացնող մարմին: Սքրինինգը մեկնարկել է 2021թ. հունվարի 19-ին Լոռու մարզում, այնուհետև շարունակվելու է Տավուշում և Սյունիքում, նախատեսվում է ավարտել 2022թ. վերջին՝ հետազոտելով շուրջ 26000 կին 50-69 տարիքային խմբում:

Գրքույկում շարադրվածը չի կրում բժշկական կամ իրավաբանական բնույթ և չի փոխարինում մասնագետի խորհրդատվությանը: Առողջական վիճակի հետ կապված ցանկացած հարցով պետք է անհապաղ դիմել բժշկի:
Մի՛ մերժեք մասնագետների խորհրդատվությունը և մի՛ հետաձգեք բժշկին այցելությունը:

«ՀԵՆԱՐԱՆ» բարեգործական հիմնադրամի կարծիքով՝ բուժմանն առնչվող բոլոր որոշումները հիվանդներն ու նրանց բժիշկները պետք է կայացնեն համատեղ:

Գրքույկը մշակվել և տպագրվել է «ՀԵՆԱՐԱՆ» բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ:
Տրամադրվում է ԱՆՎՃԱՐ: